Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 23.12/[181861]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ԺԱՄԸ 15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ս. Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Վ. Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական վարչության պետ
Ա. Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Հ. Ավագյան	Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի խորհրդատու

Առևտրի (առք ու վաճառքի) գործունեության շրջանառության հարկի դրույքաչափի փոփոխության և տարեկան մինչև 58.35 մլն դրամ իրացման շրջանառության շեմի փոփոխության վերաբերյալ

(Վ. Միրումյան, Հ. Ավագյան, Ս. Կարայան, Վ. Ավանեսյան, Վ. Գաբրիելյան, Տ. Սարգսյան)

7. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Վ. Կարապետյանին՝

1) ՓՄՁ-ների և ՓՄՁ-ների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկել տարեկան մինչև 58.35 մլն

դրամ իրացման շրջանառության շեմը չփոխելու, առևտրի ոլորտի շրջանառության հարկի դրույքաչափը մինչև 1 տոկոս իջեցնելու և դրա փոխարեն վարչարարության խստացման միջոցով մոտ 37000 տնտեսավարող սուբյեկտից գործունեության փաստաթղթային ապահովում պահանջելու վերաբերյալ առաջարկը և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին.

2) միևնույն ժամանակ ներկայացնել փաթեթային փաստաթուղթ՝ առևտրի ոլորտի շրջանառության հարկի դրույքաչափի փոփոխության հետ միասին ներառելով առևտրի ոլորտի ՓՄՁ-ների մոտ փաստաթղթային ապահովման գծով ստուգումների իրականացման ընթացակարգի նախագիծ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ